ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

25.01. 2018թ
գ.Մերձավան

- 2017թ ձմեռային զինակոչային հասակի /2002թ ծնված/ պատանիների պաստաթղթերը ներկայացվել են էջմիածնի զինվորական կոմիսարիատ, համայնքապետարանը անմիջական աջակցություն է ցուցաբերվել ամառային զորակոչին, կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության բանակում ծառայած 1997թ ծնված՝ զորացրվող զինապարտների ընդունման, վերահաշվառման գործընթացը, ապահովում է զինապարտների ակտիվ մասնակցությունը հայկական բանակի զորավարժանքներին:
- Մերձավան համայնքի 2017թ. տարեկան ֆոնդային բյուջեն եկամտային մասով կազմում է 13 940 260ՀՀ դրամ, ծախսային մասով կազմել է 1 995 000 ՀՀ դրամ:
- Մանկապարտեզի աշխատանքները կոորդինացնելու, ժամանակին ու անթերի կազմակերպելու համար 2017թ երկրորդ կիսամյակում տրամադրվել է, որպես սուբսիդիա՝29 700 000 ՀՀ դրամ, այն ուղղվել է աշխատավարձի, կոմունալ ծառայությունների, սննդի, նորոգումների և սարքավորումների ձեռք բերման համար:
- 2017թ երկրորդ կիսամյակում համայնքապետարանը բնակիչներից ստացել է 105 դիմումներ, որոնք քննարկվել են ու ժամանակին տրվել են պատասխաններ:
- Համայնքապետարանը բնակիչներին տվել է 769 տեղեկանք, ստացվել է 368 պաշտոնական նամակներ, որոնց տրվել է պատասխաններ՝ 324 պաշտոնական նամակներով, կայացվել է ավագանու 13 նիստ և 73 որոշումներ, տրվել է 83 հրամաններ, համայնքի ղեկավարի 29 կարգադրություններ , ընդունել է համայնքի ղեկավարի 90 որոշումներ:
- Կատարվել է համայնքային սեփականության հողամասերի օտարում, աճուրդային կարգով՝

  1. բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 0.00138հա և այլ հողամաս 0.022հա:

  2. բնակավայրի նշանակության խառը կառուցապատման 0.0108հա, գյուղ նշանակության 3-րդ կարգի 0.2175հա , 4-րդ կարգի 0.1316հա:

  3. բնակավայրի նշանակության խառը կառուցապատման 0.00492 հա:

  4.բնակավայրի նշանակության այլ հողերի 0.0542, 0.022հա և խառը կառուցապատման 0.0061հա և 0.008հա:
- Վարձակալությամբ տրվել է 10 հողակտորներ՝ 4.4421հա, 0.0042հա, 06939հա, 1.6859հա, 2.3173հա, 0.6001հա, 0.9545հա, 0.4863հա, 0.0102հա, 3.0հա:
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է 7 390 000 ՀՀ ՀՀդրամ դրամական օգնություն.

  ա/ Մերձավանցի նորածին 38 երեխաների ծնողներին 50000-ական ՀՀ դրամ, հատկացվել է 1900 000 ՀՀ դրամ:

  բ/ Մահացածների ընտանիքներին/գրանցվել է 21 մահ/ 100000-ական դրամ, վճարվել է 2 100 000 ՀՀ դրամ:

  գ/ Համայնքի սակավ ապահովված բնակիչներն տրամադրվել է 3 390 00 000ՀՀ դրամ:
- Արցախյան ազատամարտի զոհվածների ընտանիքներից երկուսին՝Սուսաննա Այվազյանին և Իսկուհի Գասպարյանի համար տրամադրվել է ուղեգրեր ,,ART,, ,,Հատուցում 2017թ,, ծրագրի շրջանակներում, բարեգործական ընկերությունից, վճարվել է 100 000 ՀՀ դրամ արժողությամբ:

- Համայնքապետարանը « Կանանց միջազգային տոնի», «Մայրության և գեղեցկության օրվա» կապակցությամբ համայնքապետարանի, փոստի, մանկապարտեզի, մշակույթի տան, բուժ անբուլատորիայի 98 կին աշխատակիցների նվերների համար ծախսել է 319 000 ՀՀ դրամ, համայնքապետարանի կին աշխատողներ համար 32 000 ՀՀ դրամ, մանկապարտեզի աշխատողների համար 40 000 ՀՀ դրամ, զոհված ազատամարտիկների ընտանիքների համար 20 000ՀՀ դրամ արժողությամբ գնվել է մայրաքաղաքում կազմակերպված համերգերի և ներկայացումների տոմսեր:
- Համայնքի գյուղամիջյան ճանապարհների փոսալցումը բազալտի փոշով հարթեցման աշխատանքների համար ծախսվել է 1 000 000ՀՀ դրամ գումար:
- Համայնքը ևս մասնակցել է 2017թ մայիսի 27-ին համապետական շաբաթօրյակին, օգտագործելով 3 միավոր տեխնիկա՝ երկու ,,Զիլ,, մակնիշի բեռնատար և մեկ տրակտոր ծախսվել է 500 000ՀՀդրամ:
- Գազաֆիկացվել են մեկ բնակարան և մեկ հացի փուռ:
- Համայնքի Երևանյան խճուղու 3.2 կմ վրա կատարվել է ասֆալտի փոսալցման աշխատանքներ և համայնքի ղեկավարը ծախսվել է 300 000 ՀՀ դրամ գումար:
- Երեխաների պաշտպանության օրը՝ հունիսի 1-ին համայնքի մանկապարտեզում, դպրոցում և մշակույթի տանը կազմակերպվել է միջոցառումների շարք, մանկապարտեզի 125 սաներ ստացել են նվերներ և բազմամարդ հավաքված համագյուղացի երեխաները հյուրասիրվել են քաղցրավենիքներով:
- 2017 թվականի թերթերի բաժանորդագրման համար ծախսվել է 132 000 ՀՀ դրամ:
- Համայնքի միջնակարգ դպրոցի «Վերջին դասի» կազմակերպումը հովանավորել է համայնքապետարանը:
- Համայնքապետարանի աշխատակիցների համար գնվել է մայրաքաղաքում կայանալիք համերգի տոմսեր 60 000 ՀՀ դրամ արժողության համերգի տոմսեր:
- Համայնքում աղբահանման աշխատանքները կազմակերպելու համար տրամադրվել է 3 000 000 ՀՀ դրամ, այն կատարվում է շաբաթական երկու անգամ:
- Համայնքի կոյուղին շատ հին է և հաճախակի նորոգման կարիք է ունենում՝ 2017 թվականի երկրորդ կիսամյակում շուրջ 1080 գծամետր կոյուղու ջրագիծ է մաքրվել՝ ծախսվել է 380 000 ՀՀ դրամ:
- Մերձավան համայնքի Երևանյան խճուղի թիվ 15 շենքի՝ ուժեղ քամիներից վնասված տանիքի վերանորոգման նպատակով տրամադրվել է 499 800ՀՀ դրամ գումար շինանյութեր ձեռք բերելու համար:
- Համայնքի Այգեգործների և Սևանի փողոցների գիշերային լուսավորություն անցկացնելու համար ծախսվել է 692 000 ՀՀ դրամ գումար:
- Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնին, ամենամյա մրցանակաբաշխության համար հատկացվել 50 000 ՀՀ դրամ:
- ,,Հայաստան համահայկական հիմնադրամին,, հատկացվել 50 000ՀՀ դրամ գումար:
- Համայնքապետարանի պատուհանագոքերի փոխելու համար ծախսվել է 175000 ՀՀ դրամ գումար:
- Համայնքապետարանի աշխատակիցների համար կազմակերպվել է ամանորյա ցերեկույթ՝ ծախսվել է 200 000 ՀՀ դրամ:
- Համայնքապետարանի աշխատակիցների և 40 առաջին դասարանցիների ամանորի նվերների համար ծախսվել է 230 000 ՀՀ դրամ գումար:
- Համայնքի փողոցները ամանորի լույսերով զարդարելու և գիշերային լուսավորություն մասնակի նորոգելու համար ծախսվել է 230 000 ՀՀ դրամ գումար:
- Մանկապարտեզի ավագ խմբի՝ առաջին դասարան հաճախող երեխաների նվերների համար ծախսվել է 157 000 ՀՀ դրամ գումար:
- Ձեռք է բերվել քլորակիր 38 000ՀՀ դրամ արժողությամբ:
- Մանկապարտեզի դահլիճի և խմբասենյակի համար գնվել են 992000ՀՀ դրամ արժողությամբ գորգեր:

- Մանկապարտեզի ամանորի հանդեսի և նվերների ձեռք բերման համար ծախսվել է 500 000 ՀՀ դրամ գումար:
- Համայնքի մակույթի տան դարպասի ձեռք բերման և տեղադրման համար ծախսվել է 430 000 ՀՀ դրամ գումար:
- Համայնքի գրադարանի համար ձեռք է բերվել գեղարվեստական գրականություն 80 000 ՀՀ դրամ արժողությամբ:
- Համայնքի ղեկավար՝ Լ.Գրիգորյանը համայնքի փողոցների լուսավորության անցկացման համար անձնական ներդրումամբ ծախսել է 100 000ՀՀ դրամ գումար:
- Համայնքում կազմակերպվել է շաբաթօրյակներ, տեխնիկայի գործիքների և նյութերի ձեռք բերման, աղբի տեղափոխման համար ծախսվել է 90 000ՀՀ դրամ գումար:
- Համայնքի ֆուտբոլի խմբի սաների համար գնվել է համազգեստ և գնդակ:
- Համայնքի ղեկավար՝ Լ.Գրիգորյանը անձնական ներդրումամբ գնել է 6 տոննա ասֆալտ, ծախսել է 200 000ՀՀդրամ գումար Մերձավան - Փարաքար միջհամայնքային ճանապարհի վերանորոգման՝ փոսալցման համար:
- Քաղաքացիների , ինչպես նաև «Երկրագործության և բույսերի պաշտպանության» գիտական կենտրոն ՊՈԱԿ աշխատակիցների, դիմումների հիման վրա դարձյալ կատարվում է օժանդակություն համայնքի բնակիչների և այգեգործական ընկերության անդամների հողակտորների չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներում:
- Համայնքում շարունակում է գործել ,,Արեգակ,, վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը:
- Համայնքապետարանը ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները՝ ըստ պատկանելիության :
- Համայնքապետարանը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին:

2018թ-ին համայնքի հիմնախնդիրներն են.

- Համայնքի կենտրոնական փողոցների և նոր թաղամասերի գիշերային լուսավորության անցկացում.
- Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգում՝փոսալցում .
- Ասֆալտապատում.
- Համայնքում կանգառների կառուցում .
- Աջակցություն համայնքի նոր թաղամասի գազիֆիկացմանը.
- Աջակցություն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանը.
- Ֆուտբոլի դաշտի վերանորոգում.
- Աջակցություն ներհամայնքային՝ ոռոգման ջրատարի վերանորոգման.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ